

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԿՐՏՉՅԱՆ ԼԻԼԻԹ ՍԵՐՅՈՒՃԱՅԻ**

**ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2005 թթ.**

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր**

**ԵՐԵՎԱՆ – 2012**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար

պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Մինասյան Է. Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ

պատմական գիտությունների դոկտոր  
Եթիմյան Գ. Լ.  
պատմական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Զոհրաբյան Է. Լ.

Առաջատար կազմակերպություն

Գյումրու պետական մանկավարժական  
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հուլիսի 10-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. հունիսի 10-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Յ. Ղ.

## **ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

### **ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:**

Հայտնի է, որ 21-րդ դարում երկրները թևակոխում են տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտելիքահենք տնտեսության շրջափուլ, որտեղ տնտեսական զարգացումը և երկրի միջազգային մրցունակությունը որոշվում են առավելապես մարդկային կապիտալի շնորհիվ: Եշված պայմաններում միջազգային մակարդակով մրցունակ մնալու համար յուրաքանչյուր երկրի տնտեսական ռազմավարության մեջ առանձնակի կարևորություն է ստանում կրթությունը՝ որպես մրցունակության կարևոր գործոն, և, հետևաբար, նաև կրթական համակարգը՝ որպես մարդկային կապիտալի զարգացումն ապահովող հաստատություն:

Թե՛ միջազգային գործընթացները, և թե՛ կրթության դերի մեծացումը հանգեցրին նրան, որ ներկայումս աշխարհի գրեթե բոլոր զարգացած երկրներում ընթանում են կրթական համակարգի վերափոխումներ, որոնք ուղղված են մի կողմից ոլորտի միջազգայնացման մարտահրավերներին շահեկանորեն դիմակայելուն, մյուս կողմից՝ կրթական համակարգի տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Ուստի, առաջանում է կրթական համակարգի արդիականացման և վերափոխումների խնդիր, որի լուծումը պահանջում է ոլորտում լուրջ քաղաքականության մշակում և իրագործում:

Ելնելով Հայաստանի զարգացման առանձնահատկություններից՝ կարծում ենք, որ մեր երկրի առաջընթացի հիմնական ուղիներից մեկը կարող է լինել մարդկային կապիտալը, ուստի արդիական են դառնում ՀՀ կրթական համակարգի վերափոխումներին առնչվող ուսումնասիրությունները, և այդ խնդիրների լուծման ուղիների ու մեխանիզմների մշակումը:

Ցանկացած երկրում կրթության մոդելները զգալի չափով պայմանավորված են ազգային ավանդույթներով և առանձնահատկություններով:

Կրթական համակարգի կերպափոխման դիտարկումը ժողովրդավարության անցման պայմաններում հույժ կարևոր է: Ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր երկրի և հասարակության համար կրթության դերը խիստ որոշիչ է: Կրթությունը մարդկային կապիտալի և հասարակությունում սոցիալական կապիտալի զարգացման կարևոր ու հիմնական գործոնն է: Զարգացած տնտեսությունները հիմնվում են որակյալ աշխատուժի և գիտարար տեխնոլոգիաների վրա:

Հայաստանի անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, կարևորվում էր ժողովրդավարական և իրավական զարգացման համաաշխարհային միտումներին ինտեգրվելը:

Այս գերխնդիրը թելադրում էր անխուսափելի վերափոխումներ հասարակական կյանքի մի շարք ոլորտներում: Հայաստանի կրթական համակարգը պետք է դառնար մրցունակ և առաջատար զարգացող ոլորտ, և այս ոլորտում կառուցվածքային ու բովանդակային վերափոխումներն անխուսափելի էին:

1991 թվականին հայ ժողովրդի և հայոց պետականության պատմության մեջ բացվեց մի նոր էջ, երբ հայ ժողովուրդը վերականգնեց անկախությունը: Չնայած բազմաթիվ դժվարություններին՝ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին անկախ պետության ստեղծման ու զարգացման համար: Ցանկացած պետություն հզոր է ոչ միայն իր սոցիալ-տնտեսական ու ռազմական ուժով, այլ նաև մշակույթով ու կրթությամբ:

**ԱՏԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության հիմնական նպատակն է ՀՀ կրթական համակարգում տեղի ունեցող միջազգայնացման գործընթացների, դրանցում միջազգային փորձի, ինչպես նաև տնտեսության հետ ունեցած փոխկապվածության խնդիրների ուսումնասիրման միջոցով մշակել համակարգի արդիականացման համալիր մոտեցում, որն ուղղված կլինի մի կողմից ՀՀ կրթական համակարգի արտաքին՝ միջազգայնացման խնդիրների լուծմանը, մյուս կողմից՝ ներքին՝ երկրում ներտնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Ըստ այդմ, աշխատանքում առաջարկվել և լուծվել են մի շարք խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- ուսումնասիրել ՀՀ կրթական համակարգում տեղի ունեցող վերափոխումների ներկա վիճակը և բացահայտել առկա այն բացերը, որոնք խոչընդոտում են համակարգի միջազգայնացմանն ու տնտեսական արդյունավետության աճին,
- վերլուծել կրթական համակարգի և տնտեսության փոխկապվածության արդյունավետության և կրթական անհամապատասխանության խնդիրները,
- հետազոտել ՀՀ կրթական համակարգի միջազգայնացման ներկա վիճակը և բացահայտել ՀՀ կրթական ծառայությունների արտահանման ռազմավարական հնարավորությունները,
- վերլուծել ՀՀ կրթական համակարգի Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ) անդամակցման գործընթացները և դրանցում նկատվող բացերը, մշակել հաղթահարման մեխանիզմները,
- ուսումնասիրել ՀՀ կրթական համակարգի՝ Բոլոնյան գործընթացին անդամակցման նորմատիվաիրավական դաշտը:

**ԱՏԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՍՔԸ:** Հետազոտության մեթոդոլոգիական հիմքում դրված են պատմաքննական և պատմահամեմատական վերլուծության մեթոդներով: Հետազոտության կարևոր մեթոդոլոգիական սկզբունքներ են դարձել պատմական անցյալի վերազնահատումը՝ փաստերի համադրման և պատմական միջավայրի նկարագրի ամբողջացման, կոնկրետ պատմականության մոտեցումներով:

**ԱՏԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:** Ուսումնասիրության ժամանակագրությունն ընդգրկում է 1991-2005 թվականները: Կարող է հարց առաջանալ, թե ի՞նչ սկզբունքով ենք ընտրել թեմայի այս ժամանակաշրջանը: Բանն այն է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ կրթական համակարգում տեղի ունեցած վճռորոշ փոփոխություններ Ազգային դպրոցի ստեղծում, կրթական նոր համակարգի ներմուծում, ինտեգրվելը համաշխարհայնացմանը և ի վերջո Բոլոնյան գործընթացին նախապատրաստվելը: Իսկ սահմանը մինչև 2005 թվականը հասցնելը, բացատրում ենք պետական կրթական ծրագրի ավարտով և Բոլոնյան գործընթացի կիրառմամբ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՑԸ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունում կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները տվել են տեսական, մեթոդական և գործնական ուղղվածություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնց գիտական նորույթը հետևյալում է.

- վերլուծության միջոցով մշակվել են «բուհ-տնտեսություն» փոխկապվածության արդյունավետության բարձրացման ուղիները,

- առաջարկվել է կրթական համակարգի գնահատման նոր մոտեցում, ըստ որի՝ բուհական կրթությունը պետք է արտացոլի տնտեսության պահանջները,
- ուսումնասիրելով բուհական համակարգում Բոլոնյան դրույթների ներդրման գործընթացը՝ ՀՀ նորմատիվաիրավական դաշտի բարելավման տեանկյունից՝ բացահայտվել են առկա օրենսդրական բացթողումները և մշակվել առաջարկություններ դրանց վերացման վերաբերյալ,
- բացահայտվել են տեղական և արտասահմանյան բուհերի փոխգործակցման ոլորտում տեղ գտած թերությունները և մշակվել են դրանց հաղթահարման ուղղությունները:

Ատենախոսության տեսական նշանակությունը նրանում է, որ փորձ է կատարվել համալիր մոտեցում կատարել կրթական համակարգ, տնտեսություն և միջազգայնացում եռանկյունու պատճառահետևանքային կապերի, առկա և հնարավոր խնդիրների բացահայտման հարցում: Ընդ որում՝ մեծ մոտեցումը հնարավորություն է տվել խուսափել մասնակի վերլուծությունից և հետևաբար նաև ոչ համալիր և ոչ ամբողջական առաջարկների մշակումից:

Ատենախոսության վերլուծության արդյունքները և դրանց հիման վրա կատարված առաջարկություններն ունեն նաև կարևոր գործնական նշանակություն ՀՀ կրթական համակարգի արդիականացման և մրցունակության առումով:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնի կողմից:

Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 5 հոդվածներում և հանրապետական ու միջազգային գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում:

**ԹԵՄԱՅԻ ՌԻՍԻՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՎՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:** Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում համեմատաբար նոր պատմություն ունի կրթության գիտականորեն համակարգված ուսուցումը: Այս բնագավառում հավաքական, համապարփակ և ժամանակագրական սկզբունքների վրա հիմնված աշխատություններ չկան: Հետազոտությունների մեծ մասը վերաբերում է որոշակի խնդիրների: Ընդհանուր առմամբ, թեմային վերաբերող աղբյուրներն ու նյութերը բաժանված են չորս հիմնական խմբերի՝ 1) պաշտոնական և արխիվային փաստաթղթեր, օրենքներ, զեկույցներ, վիճակագրական տեղեկագրեր, պաշտոնական կայքէջեր, 2) մեծագրություններ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, 3) գիտական հոդվածներ, 4) պարբերական մամուլ:

Կրթական գործընթացը բացահայտելու առումով մեծ տեղ է հատկացվում արխիվային նյութերին: Այս առումով բավական արժեքավոր են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ)<sup>1</sup> և ՀՀ կառավարության<sup>2</sup> ֆոնդերի նյութերը: Այս նյութերը բաց են և մատչելի օգտագործման համար: Լայնորեն օգտվել ենք պաշտոնական

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ.1172, ց.1, գ.16, ք.1-18, գ.41, ք.30-32, գ.43, ք.1-2, գ.24, ք.1-27, գ.12, ք.1-8, գ.41, ք.1,2, գ.77, ք.2, գ.82, ք.2:

<sup>2</sup> ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ՝ ՀՀ կառավարության որոշումները 1995 թ., N6 (329 որոշում) հ. 63, ք. 53-54:

կայքէջերից<sup>3</sup>:

Հարուստ և արժեքավոր նյութ է պարունակում Կրթության ազգային ինստիտուտի կողմից հրատարակված «Բարձրագույն կրթություն»<sup>4</sup> տեղեկագիրը: Այստեղ ամփոփված են բարձրագույն կրթության ոլորտում ընդունված օրենքների ամբողջական տեքստերը:

Ատենախոսությունում օգտագործվել են միջազգային կազմակերպությունների կողմից կրթության ոլորտին վերաբերող ուսումնասիրությունների արդյունքները: Հատկապես կարևոր է նշել ՄԱԿ-ի կողմից հրատարակված փորձագիտական մշակումներն ու զեկույցները, որոնք հայտնի են «Մարդկային զարգացման ազգային զեկույց» վերտառությամբ<sup>5</sup>: Հայաստանի Հանրապետությունն ԱՊՀ այն երկրներից է, որը 2009 թվականից սկսած ձեռնարկել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ԱՀՌԾ) մշակման գործընթացը: Նշված պաշտոնական փաստաթղթերում մեծապես կարևորվում են կրթության, աղքատության և տնտեսական ակտիվության փոխադարձ ազդեցությունները՝ տնտեսական աճի և աղքատության նվազեցման տեսանկյունից<sup>6</sup>:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) տարեկան զեկույցներն ու հրատարակումները<sup>7</sup>, ՀՀ 1991-2005 թթ. վիճակագրական տարեգրքերը<sup>8</sup>, ՀՀ կառավարության գործունեության հաշվետվությունները<sup>9</sup>, ՀՀ

---

<sup>3</sup>ՀՀ կրթության և գիտության նախարարություն՝ URL://<http://www.edu.am/> (13.08.2010), ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝ URL://<http://www.armstat.am/> (13.08.2010), Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն՝ URL://<http://armenic.am/> (13.08.2010), ՀՀ Ազգային ժողով՝ URL://<http://www.parliament.am/> (13.08.2010), ՀՀ կառավարություն՝ URL://<http://www.gov.am> (13.08.2010), Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգ՝ URL://<http://www.arlis.am> (13.08.2010), ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն՝ URL://<http://www.stat-nkr.am> (13.08.2010), Կրթության ազգային ինստիտուտ՝ URL://<http://www.aniedu.am> (13.08.2010), Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն՝ URL://<http://www.ktak.am/> (13.08.2010), Կրթական ծրագրերի կենտրոն՝ URL://<http://www.cfep.am/> (13.08.2010), ՀՀ Սահմանադրական դատարան՝ URL://<http://www.concourt.am> (13.08.2010),

<sup>4</sup> Տես Բարձրագույն կրթություն, տեղեկագիր, պր. 1, Ե., «Կրթության ազգային ինստիտուտի հրատ.», 2005, պր. 2, 2008, պր. 3, 2007, պր. 4, 2007:

<sup>5</sup> Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Մարդկային զարգացման ազգային զեկույց, Ե., «Հայաստան», 2001, Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2006, Կրթությունը Հայաստանում, Ե., 2006, Մարդկային զարգացման զեկույց, Պետության դերը, Հայաստան 1998, Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2006, Կրթական վերափոխումները Հայաստանում, Ե., 2007:

<sup>6</sup> Աղքատների ծայրը, փաստաթուղթը պատրաստվել է Հայաստանի ԱՀՌԾ-ի վերանայման համար, Հայստան, UNDP, 2007, Կրթությունը, աղքատությունը և տնտեսական ակտիվությունը Հայաստանում, իրավիճակային վերլուծության զեկույց, Ե., «ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակ», 2002:

<sup>7</sup> ՀՀ ԱՎԾ, «ՀՀ սոցիալական վիճակը 2005 թ.», Ե., 2006 URL://<http://www.armstat.am/>(13.11.2010), ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը. գնահատականներ, վերլուծություններ, միջոցառումներ: ՀՀ կառավարության «Տնտեսական բարեփոխումների վերլուծական-տեղեկատվական կենտրոն», URL://<http://www.gov.am/>(10.10.2011):

<sup>8</sup> ՀՀ վիճակագրական տարեգիրք, 1999, 2000, 2006:

կառավարության և ՀՀ ԿԳՆ 2001-2003 թթ. պաշտոնական տեղեկագրերն<sup>10</sup> ու մի շարք օրենքներ<sup>11</sup>:

Կրթության հիմքում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը մշակվել է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» հիմնադրույթներին համապատասխան՝ հիմք ընդունելով կրթության համակարգի արձանագրած ձեռքբերումները<sup>12</sup>:

Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտի ներկայացմանն են նվիրված «Կրթությունը Հայաստանում»<sup>13</sup> տարեգրքերը, որտեղ ներկայացվում են համակարգի նկարագրությունը, որոշակի վիճակագրական տվյալներ և զարգացման հեռանկարները՝ ըստ ուսումնական տարիների:

21-րդ դարի սկզբին ի հայտ են եկել կրթական համակարգը միջազգային գործընթացներին կապող աշխատանքներ, որտեղ բացահայտվում և հիմնավորվում են ոլորտում համաշխարհայինացման հետևանքների տարատեսակ պատճառահետևանքային կապերը: Հատկապես վերջին տարիներին բազմաթիվ երկրների կրթական համակարգերում ի հայտ եկող միջազգայնացման գործընթացներ դեռ նոր են սկսել զրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Մասնավորապես հարկ է նշել Կ. Թորեսի<sup>14</sup>, Ջ. Քիսթի<sup>15</sup>, Ռ. Ստրադլինգի<sup>16</sup> աշխատանքը: Ժամանակակից կրթության հիմնախնդիրներին փիլիսոփայության տեսանկյունից անդրադարձել է Ս. Խաչատրյանը<sup>17</sup> և ուսումնասիրման առանձին բաժին հատկացրել անցումային շրջանում Հայաստանի կրթական համակարգին:

---

<sup>9</sup> ՀՀ կառավարության գործունեությունը 2000-2004 թթ., Ե., «Գասպրինտ», 2005, URL:// [http://www.gov.am/\(13.11.2010\)](http://www.gov.am/(13.11.2010)), ՀՀ կառավարության 2005 թվականի գործունեության հաշվետվությունը, Ե., 2006, «Գասպրինտ», URL:// [http://www.gov.am/\(13.11.2010\)](http://www.gov.am/(13.11.2010)):

<sup>10</sup> ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 3 (135), 31 հունվարի 2001: ՀՀ ԿԳՆ տեղեկագիր, 2002, 2003:

<sup>11</sup> ՀՀ օրենք «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», ՀՀ օրենք «Կրթության մասին», «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման 2007-2008 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1570-Ն որոշում, նոյեմբեր 2006 թ., ՀՀ կառավարության 2005 թ. սեպտեմբերի 8-ի և 15-ի թիվ 1986-Ն և 2114-Ն որոշումները «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին», ՀՀ օրենք «Նախադպրոցական կրթության մասին», Ե., 2005, «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքը:

<sup>12</sup> Կրթության զարգացման պետական ծրագիր, 2001-2005 թթ., Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիր:

<sup>13</sup> Կրթությունը Հայաստանում, Ե., 2003, 2004, 2006:

<sup>14</sup> Կ. Թորես, Ժողովրդավարություն, կրթություն և բազմամշակութայնություն, քաղաքացիության երկրնորանքները գլոբալ աշխարհում, «Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ Միժի-ի հրատ.», Ե., 2005:

<sup>15</sup> Ջ. Քիսթ, Կրթական բազմազանություն և միջմշակութային կրթություն, ձեռնարկ, Ե., «Լինգվա» հրատ., 2008:

<sup>16</sup> Ռ. Ստրադլինգ, Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը. ուսուցչի ձեռնարկ, Ե., «Լինգվա», 2008:

<sup>17</sup> Ս. Խաչատրյան, Կրթության փիլիսոփայություն. ձեռնարկ դասախոսների և ուսանողների համար, Ե., «Լինգվա», 2009:

Հատկանշական է, որ կրթական համակարգի տեսական վերլուծությանը անդրադարձել են ինչպես ռուս մի շարք հեղինակներ՝ Վ. Կալինինան<sup>18</sup>, Վ. Սերիկովը<sup>19</sup>, Մ. Ֆուլլանը<sup>20</sup> և այլք, այնպես էլ եվրոպական հեղինակներ, ի դեմս Ն. Փոստմանի<sup>21</sup>, Մ. Միդի<sup>22</sup>, Ջ. Դյուրիի<sup>23</sup> և ուրիշների:

Անկախությունը վերականգնած Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վերափոխումների ավելի քան տարի տարիների պատմության ուսումնասիրմանն է անդրադարձել Է. Մինասյանը<sup>24</sup>:

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կրթության համակարգերին, մասնագետների պատրաստման հիմնահարցերին, մասնագիտություններին պետական կրթական չափորոշիչների մշակման ու ներդրման արդի պայմաններին ու գիտամանկավարժական պահանջներին է անդրադարձել Հ. Պետրոսյանը<sup>25</sup>:

Անկախացումից հետո հրատարակվեցին բազմաթիվ ձեռնարկներ<sup>26</sup>, որոնք նպատեցին նոր գաղափարների և ուղիների որոնմանը՝ կրթության որակը բարելավելու համար: Ներկայացված տեսություններն ու մոտեցումները նպաստում են այս ոլորտում նոր ուղղությունների ու լավագույն փորձի ներդրմանը, ինչպես նաև արդյունավետ ռազմավարությանը:

Ազգային դպրոցի ստեղծման, խնդիրների, ազգային կրթության դերին ու նշանակությանն իրենց աշխատություններում անդրադարձել են Ս. Գևորգյանը<sup>27</sup>, Ա. Մարությանն ու Ա. Սողոմոնյանը<sup>28</sup>:

Հետազոտության մեջ տեղ է հատկացված մամուլին՝ «Երկիր», «Հայաստանի

---

<sup>18</sup> В. Калинина, Проблема повышения эффективности процесса нравственного воспитания школьников, URL://<http://www.dissercat.com/>(17.08.2011).

<sup>19</sup> В. Сериков, Образование и личность, Москва, „Логос“, 1999, URL://<http://pedlib.ru/Books/>(27.09.2011).

<sup>20</sup> М. Фуллан, Новое понимание реформ в образовании, Колесов изд. просвещение, 2006, URL://<http://www.sprinter.ru/books/>(27.09.2011).

<sup>21</sup> N. Postman, The Disappearance of Childhood, Delacorte Press, New York, 1982, URL://<http://www.amazon.com/Disappearance-Childhood-Neil-Postman/>(27.09.2011).

<sup>22</sup> М. Мид, Культура и мир детства /Сост.редисл. И. С. Кона, М.: “Найка”, 1988.

<sup>23</sup> J. Dewey, Democracy and Education, New York, 1916. URL://[http://en.wikisource.org/wiki/Democracy\\_and\\_Education](http://en.wikisource.org/wiki/Democracy_and_Education)(27.09.2011).

<sup>24</sup> Է. Մինասյան, Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Ե., «Երևանի համալսարանի հրատ.», 2003:

<sup>25</sup> Հ. Պետրոսյան, կրթության ժամանակակից համակարգեր. ուսումնական ձեռնարկ, Ե., «Լուսաբաց», 2005:

<sup>26</sup> Օհանյան Ա., Անտոնյան Ք., Խաչատրյան Ն. և ուրիշներ, Դասընթացի մշակում և կառավարում, ուսումնամեթոդական ուղեցույց, Ե., Հեղինակային հրատ., 2010, Դպրոցի ղեկավարում և կառավարում. ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, Ե., «ԱՅՌԵՍԱ», 2004, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. տեսություններ, մեթոդներ, գնահատում. ձեռնարկ մանկավարժների համար, Ե., «Նոյան տապան», 2005, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների համար, Ե., «Նոյան տապան», 2005, Հասարակագիտության ինտեգրված ուսուցում, ուսումնական ծրագրի մշակում և թեմատիկ միավորների օրինակներ. ձեռնարկ ուսուցիչների համար, Ե., «Լուսաբաց», 2006:

<sup>27</sup> Ս. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Ե., «Ձանգակ-97» հրատ., 2002:

<sup>28</sup> Ա. Մարության, Ա. Սողոմոնյան, Հայ ազգային դպրոց. խնդիրներ, մտորումներ, առաջարկություններ, Ե., «ՀՀ ԺԿՆ մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի հրատ.» խորհուրդ, 1990:



Հանրապետություն», «Իրավունք», «Օրինաց երկիր», «Առավոտ», «Հայաստան», «Ժամանակ», «Դրօշակ»<sup>29</sup>, «Երևանի համալսարան»<sup>30</sup>, Հայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի Լրատու<sup>31</sup>, Հանդես Երևանի համալսարանի<sup>32</sup>, Հեռաուսուցումը Հայաստանում, Փոխակերպվող հասարակություն<sup>33</sup>:

**ԱՏԵՆԱԽՈՒՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է երկու ենթագլուխներից) և եզրակացություններ բաժիններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 159 էջ:

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակն ու խնդիրները, օգտագործված սկզբնաղբյուրները և գրականության տեսությունը:

**ԱՌԱՅԻՆ ԳՆՈՒՄԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆՂԱԿԱՅԻՆ ՓՈՓՈՒՍՈՒՄԸ ՀԵՏԽՈՐՀՐԴՂԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ»,** բաղկացած է երկու ենթագլխից:

**ԱՌԱՅԻՆ ԵՆԹԱԳԼԽՈՒՄ «Կրթության դերը հասարակության կյանքում»,** համառոտ և ընդհանուր գծերով ներկայացված է հասարակության կյանքում կրթության ունեցած դերի մասին:

Կրթությունը մարդու անձի ձևավորման ու զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների ու հմտությունների մշակման, անցյալի փորձի յուրացման գործընթաց է:

Կրթությունը ոչ միայն մարդու զարգացման, այլև ազգային գոյատևման, ինքնության ու մարդկային առաջընթացի գրավականն է: Այն անձի ձևավորման հիմնաքարն է և իր հետևից տանում է հասարակության զարգացումը:

Ելնելով կրթության գործառույթային այսպիսի դասակարգումից, աշխարհի տարբեր երկրներում գործում է կրթության երեք մոդել, որոնք պայմանականորեն անվանվել են՝ ա. անգլիական, բ. ֆրանսիական, գ. գերմանական:

Բարձրագույն կրթական համակարգի ամերիկյան մոդելը համարվում է տարբեր մոդելների համադրման դասական օրինակ, որտեղ հետևողականորեն կիրառվում են անգլիական, ֆրանսիական և գերմանական մոդելները: Փաստենք, որ բարձրագույն ուսումնառության ոլորտում ժամանակակից կրթական համակարգերում տարբերվում է կրթական ծրագրերի երկու տեսակ.

<sup>29</sup> «Երկիր», թիվ 15, 3 ապրիլ, 2003թ., թիվ 52, 27 հունիս-3 հուլիսի, 2003, թիվ 12, 2-8 ապրիլ, 2004, «Հայաստանի Հանրապետություն», թիվ 227, 2 դեկտեմբեր, 2003, «Իրավունք», թիվ 17, 5-11 մարտի 2004, «Օրինաց երկիր», թիվ 14, 7-13 մայիսի, թիվ 22, 2-8 հուլիսի, 2004, «Առավոտ», թիվ 94, 18 մայիսի 2001, «Հայաստան», թիվ 18, 28 մայիսի 2004, «Ժամանակ», թիվ 4, 28 հունվար 1999, «Դրօշակ», թիվ 3, 1999,

<sup>30</sup> «Երևանի համալսարան», փետրվար 1999:

<sup>31</sup> Հայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի Լրատու, Ե., «Գարուն», 4(2005), էջ 16-19:

<sup>32</sup> Հանդես Երևանի համալսարանի, գիտահնֆորմացիոն լրատու, N 2(94), Ե., «Երևանի համալսարանի հրատ.», 1999, Ռեկտորի տարեկան հաշվետվությունը ԵՊՀ խորհրդում, Հանդես Երևանի համալսարանի, գիտահնֆորմացիոն լրատու, N 1(96), Ե., «Երևանի համալսարանի հրատ.», 2000:

<sup>33</sup> Հեռաուսուցումը Հայաստանում, Փոխակերպվող հասարակություն, Ե., Հայկական հեռաուսուցման ցանց, 1-2(2002):

- ա. ակադեմիական կամ համալսարանական,
- բ. մասնագիտական կամ կիրառական:

Յուրաքանչյուր երկրի կրթական նոր համակարգ պետք է արտացոլի նրա մշակութային ավանդույթները, միաժամանակ այն պետք է հաշվի առնի շուկայական տնտեսության պահանջները:

Կրթական համակարգի գործունեությունը հատկապես դժվարանում է անցումնային շրջանում, քանի որ նման պայմաններում կրթության խնդիրը դժվարությունների է հանդիպում առաջին հերթին իր առաքելությունը հասկանալու հարցում: Պատմությունը ցույց է տալիս, որ հասարակական ճգնաժամի հաղթահարման միջոցներից մեկը կրթությունն է, որն օգնում է հաղթահարել հնի ու նորի խզումը:

Անցումնային շրջանում կրթության համակարգի առջև խնդիր է դրվում ճկուն լինել և արագորեն արձագանքել սոցիալական նոր իրողություններին: Սակայն հասարակությունում կան տեսակետներ, որոնց համաձայն կրթությունը պահպանողական ոլորտ է, ինչը նշանակում է, որ կրթությունը չի կարող իր վրա վերցնել փոփոխությունների առաջամարտիկի դերը:

Անցումնային շրջանում միշտ անհամապատասխանություններ են առաջանում նոր իրողությունների և մարդկանց մտածողության միջև: Կան երեք գործոններ, որոնց հարաբերակցությունից է հիմնականում կախված կրթական փոփոխությունների ընթացքը՝ հիշողություն, երևակայություն և գործողություն: Քանի որ մեր հասարակությունում հիշողության գործոնը գերակա է երևակայության նկատմամբ, այդ իսկ պատճառով հիշողությունն է, որ մեծապես ազդում է մարդկանց գործողությունների վրա: Հիշողությունն անհրաժեշտ է ամուր կանգնելու համար, սակայն այն խոչընդոտում է զարգացմանը: Հիշողության վրա հիմնված հասարակությունը վախենում է փոփոխություններից:

Հայկական կրթական համակարգը ևս իր ուրույն տեղն ունի համաշխարհային կրթական համակարգում և բնական է, որ այն անմասն չէր կարող լինել համընդհանուր կրթական զարգացումներից:

Հայաստանի Առաջին Հանրապետության գոյության ընթացքում (1918-1920 թթ.), 1919 թ. մայիսի 16-ին որոշում ընդունվեց հիմնադրել Հայաստանի պետական համալսարանը, որը հետագայում վերանվանվեց Երևանի պետական համալսարան (ԵՊՀ): Հայաստանի Հանրապետության տարածքում առկա կրթական համակարգի հիմքը դրվել է Առաջին Հանրապետության և այնուհետև զարգացել խորհրդային իշխանության տարիներին: 1920-1930-ական թվականների վերափոխումների հետևանքով վերացավ զանգվածային անգրագիտությունը: 1932 թ. անցումը պարտադիր տարրական կրթության, ինչպես նաև լիկկայանների առկայությունը թույլ տվեցին 7-8 տարվա ընթացքում բնակչության անգրագիտությունը 83%-ից իջեցնել 16%-ի: Իսկ 1960-ական թվականներին դպրոցների լայնամասշտաբ կառուցումը հնարավորություն տվեց անցնել դեպի պարտադիր միջնակարգ կրթության:

Հայաստանի Երկրորդ (խորհրդային) Հանրապետության տարիներին (1921-1991 թթ.) ԵՊՀ-ի բազայի վրա հիմնվեցին ներկայումս գործող պետական բուհերի մեծ մասը: Խորհրդային ժամանակաշրջանում հայկական մտածողության բնորոշ գիծը բարձրագույն կրթության ավանդաբար բարձր վարկանիշն էր:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո՝ տնտեսական և հասարակական նոր հարաբերությունների պայմաններում, կարևորվում էր ժողովրդավարական և իրավական պետության կառուցումը, հասարակական և տնտեսական զարգացման համաշխարհային միտումներին

ինտեգրվելը:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում ԱԺ-ի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը<sup>34</sup>, ապա նաև «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիրը»<sup>35</sup>: Ըստ այդմ՝ պետական և ազգային կարևորագույն խնդիր է կրթության համակարգի զարգացումը, որակի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության բարձրացումը:

Այս գերխնդիրը թելադրում էր անխուսափելի վերափոխումներ հասարակական կյանքի մի շարք ոլորտներում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը պետք է դառնար մրցունակ և առաջատար զարգացող ոլորտ, և այս ոլորտում կառուցվածքային և բովանդակային վերափոխումներն անխուսափելի էին:

**ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱՎԼՈՒՄ «Կրթության համաշխարհայնացման միտումները և Հայաստանի Հանրապետությունը»**, վերտառությամբ ընդհանուր գծերով ներկայացված են համաշխարհայնացման գործընթացում կրթության կրած փոփոխությունները:

Հետխորհրդային ժամանակաշրջանում հույժ կարևոր իրողություններից է կրթական համակարգի կերպափոխման հիմնախնդիրը: Հստակորեն ուրվագծվել է անմիջական աղերսը հանրային կրթության՝ պետության գործառույթի, ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության հետ: Արդյունքում՝ ազգային ինքնության հարցը առանցքային դերակատարում է ստանձնում անցումային շրջափուլին ուղղված մարտահրավերների համատեքստում: Հետևաբար, հանրային կրթական համակարգի կառուցումը ենթադրում է բազմատեսակ գործառույթների համադրական իրականացում, «որի իմաստային բաղադրիչները (արբետիպեր) պետք է գտնվեն այլափոխական առնչությունների մեջ»: Հույժ կարևորվում է ազգային ինքնության հոգնակիության ապահովման հիմնախնդիրը, որը «պարզապես չի մերժում մշակութային բազմազանությունը և որը երևակվում է հընթացս մշակութային զանազանությունների համադրության»: Պետք է մոռանալ, որ ազգային ինքնությունը՝ իր մեջ ներառելով մինչ այդ օտարված խմբերի դերակատարությունը, ներքուստ կոնֆլիկտային է, ներքին հակասություններից անբաժան:

Ազգային ինքնության յուրօրինակ հակադրություն է համաշխարհայնացման գործընթացը: Նոր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցության շնորհիվ աճում է աշխարհի մասին իրազեկությունը, ինչը թույլ է տալիս ընթանել սեփական ինքնությունը, որը սակայն երբեմն ծայրահեղական է: Ազգայինը հաճախ նույնացվում է սոսկ անցյալի հետ: Սակայն ազգայինը միայն անցյալը չէ, այն նաև ներկան է և ապագան է:

Համաշխարհայնացումը հետարդյունաբերական հասարակությանը բնորոշ առանցքային գործընթացներից է: Այն դրսևորվում է հասարակական կյանքի

<sup>34</sup> ՀՀ օրենքը կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին, ընդունվել է 26.06.2001: Սույն օրենքով կազմվել է ՀՀ կրթության զարգացման 2001-2005 թթ. պետական ծրագիրը, որը մշակվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն, այս մասին մանրամասն տե՛ս, կրթության զարգացման պետական ծրագիր, 2001-2005, Ե., 2000:

<sup>35</sup> Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիր, URL://<http://www.parliament.am/>(29.09.2011)::

բոլոր բնագավառներում:

Համաշխարհայնացում ասելով պետք է հասկանալ տնտեսության, քաղաքականության, մշակույթի, կրթության հաղորդակցության ասպարեզում վերջին տասնամյակներում տեղի ունեցող այն փոփոխությունները, որոնք որոշակի միակերպություն են հաղորդում համաշխարհային տնտեսությանը և քաղաքականությանը:

Եթե համաշխարհայնացումը խորապես քայքայում է ազգային պետությունների հիմքերը, ապա այն նաև վերափոխում է աշխատանքի տեղաշարժը թե՛ սոցիալական միջավայրում, թե՛ ազգային սահմանները հատելով: Այն նաև ավելացրել է բազմազանությունը ազգային պետությունների ներսում:

Մենք պետք է կարողանանք, պահպանելով մեր ազգային արժեքները, ընդունել զարգացող աշխարհի մարտահրավերները՝ աշխարհում մեր արժանի տեղն ու դիրքն ունենալու համար:

Պետականության կայացման ճանապարհին Հայաստանի Հանրապետությունը ստիպված է լուծել բազմաթիվ սոցիալական խնդիրներ՝ նպատակ ունենալով ապահովել քաղաքացիների հարատև բարեկեցությունը: Առավել առաջնային է աղքատության հաղթահարումը, որտեղ կրթությունը դիտարկվում է հիմնական գերակայությունների շարքում: Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման միտումները, այս բնագավառում ևս առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթության հնարավորությունների ընդլայնումը՝ սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:

Կրթության համակարգի որակական վերափոխման համար անհրաժեշտ են հիմնավորված գործողություններ կրթության ժողովրդավարացման և նյութական հագեցվածության ուղղությամբ: Անհրաժեշտ է օգտագործել այլ քաղաքակրթությունների փորձը, մշակված միտումները և այդ ամենը կիրառել մեր կրթական համակարգում:

Կրթությունը կոչված է լուծելու երկու խնդիր: Մի կողմից նա պետք է բավարարի անձի ինացական և մասնագիտական պահանջները, մյուս կողմից՝ ձևավորի և լրացնի հասարակության մտավոր և մասնագիտական ներուժը<sup>36</sup>:

Արդի հասարակության մեջ ներկայումս ընթացող քաղաքական, տնտեսական, մշակութային փոփոխությունները մեծ ազդեցություն են ունենում կրթության վրա: Կրթական համակարգի անընդհատ կատարելագործման նախադրյալներից մեկը հասարակական մարտահրավերներին և համաշխարհային զարգացումներին ժամանակին արձագանքելն է: Այդ կապակցությամբ ստեղծվեցին մի շարք կրթական ծրագրեր:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ ակնհայտ է, որ կրթության կենտրոնական խնդիրն է ազգային արժեքների և ժողովրդավարության քննարկումների համադրական դրսևորմանը նպաստելը և մոտեցումների մշակումը բազմամշակութային ինքնությունների երկխոսության համար: Հարոյունս դրա միայն հնարավոր կլինի տարբեր անհատների միավորումն ընդհանուր նպատակների շուրջ: Այն է՝ մշակել բազմազան հասարակության մեջ համատեղ ապրելու ընդհանրական մի հարացույց, ուր հնարավոր կլինի տարաբնույթ լարվածությունների հաղթահարումը: Միով բանիվ՝ բազմազանությունը առանցքային մարտահրավեր է ցանկացած կրթական համակարգի կառուցման

<sup>36</sup> Մարդկային զարգացման հիմունքներ, կրթությունը որպես մարդու հնարավորությունների ընդլայնման միջոց, Երևան, «Նոյան տապան», 2004, էջ 290:

ճանապարհին, որի հաղթահարման դեպքում, սակայն, հնարավոր կլինի հասնել, բազմազանության պատկերացման վրա հիմնված, ազգային և համամարդկային համաձայնության:

**ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2002 թթ.)»**, բաղկացած է երկու ենթագլխից:

**ԱՌԱՋԻՆ ԵՆՏԱԳԼՆՈՒՄ՝ «Նախադպրոցական կրթության վերափոխման գործընթացը»**, ընդհանուր գծերով ներկայացված են նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված գործընթացները:

Նախադպրոցական կրթությունը շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Նախադպրոցական կրթության ոլորտում գործունեության առաջնային ուղղություններն են եղել օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը: Ոլորտի հետագա զարգացման նպատակով ընդունվել է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքը, մշակվել է վաղ մանկության զարգացման և նախադպրոցական կրթության վերափոխումների ռազմավարություն ու դրա փորձարկման ծրագիր, որը հնարավորություն կընձեռնի մեծացնելու երեխաների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացին:

Նախադպրոցական կրթության հիմնական նպատակներն են՝ երեխայի ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, հայրենիքի գաղափարի ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

Վաղ (մինչնախադպրոցական) և նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության իրականացման գործում զխավոր դերը պատկանում է ընտանիքին: Ընդ որում, ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար մեծ դերակատարում է վերապահված պետությանը: Ընտանիքին աջակցելու համար այն ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ տարբերակված ծրագրերով մտուր-մանկապարտեզներ:

1996 թվականից ՀՀ վարչատարածքային կառավարման նոր համակարգի ձևավորման արդյունքում, «ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն, նախադպրոցական հաստատությունները հանձնվել են տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ի դեմս համայնքների, որպես սեփականություն, և ներկայումս դրանց ֆինանսավորումը իրականացվում է համայնքային բյուջեներից: Դա բացասաբար է ազդել նախադպրոցական հաստատությունների գործունեության վրա, և շատ հաստատություններ ուղղակի փակվել են: Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 1996-2000 թվականների ընթացքում նախադպրոցական հաստատությունների նվազման տեմպերը արագացել են. փակվել են դրանց մոտ 28%, իսկ երեխաների ընդգրկումը կրճատվել է շուրջ 32,4%<sup>37</sup>: Ներկա փուլում հրատապ է այս ոլորտի

<sup>37</sup> «Կրթությունը Հայաստանում», 2006, էջ 8:

զարգացմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը<sup>38</sup>:

Մինչդեռ նախադպրոցական կրթությունը մեծ նշանակություն ունի ինչպես երեխայի մտավոր զարգացման, այնպես էլ նրանց՝ որպես հասարակության լիարժեք անդամի ձևավորման համար:

ՀՀ ԿԳ նախարարության առաջնահերթ խնդիրներից էր նախադպրոցական երեխաների խնամքի, կրթության և զարգացման համալիր ծրագրի մշակումը և իրականացումը:

**ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԳԼՆՈՒՄ «Միջնակարգ ընդհանուր կրթության բարեփոխման ընթացքը և արդյունքները».** Անկախացումից հետո բազմաթիվ էին դպրոցական կրթական համակարգի առջև ծագած հիմնախնդիրները, որոնք պայմանավորված են բազմաթիվ գործոններով՝ իրականացված շրջափակման հետևանքով հանրապետության տնտեսության սրընթաց անկումը, քաղաքական փոփոխությունները, էներգետիկ ճգնաժամը, բյուջեի պակասորդը, ռեսուրսների սղությունը, երկրի սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը, բնակչության լայն խավերի կենսամակարդակի անկումը, հարաճուն աղքատությունը, հասարակության պահանջների, արժեքային համակարգի փոփոխումը և դրա հետ կապված՝ հանրակրթությանը ներկայացվող պահանջների փոփոխումը: Այս ամենը անհապաղ լուծում էին պահանջում: Դպրոցները նույնիսկ, ժամանակավորապես, համարյա դադարեցին գործել աղետի գոտում և սահմանամերձ շրջաններում:

Անկախության առաջին տարիները կարելի է բնորոշել որպես համակարգի գոյամնաման և խորհրդային տարիների կրթական ձեռքբերումների պահպանման ժամանակաշրջան: 1996-1997 թվականներին, երկրի տնտեսական զարգացմանը զուգընթաց, սկսվեց հանրակրթության ոլորտի վերոփոխումը: Մինչև 2003 թ. վերափոխումները հիմնականում կառուցվածքային բնույթ էին կրում և միտված էին լուծելու համակարգի ֆինանսավորման և կառավարման խնդիրները և այս ուղղությամբ կատարվեցին մի շարք ուսումնասիրություններ և վերլուծություններ:

Վերափոխումների նոր փուլը սկսվեց 2003 թվականից և ընդգրկում էր բովանդակային հիմնահարցեր՝ կրթակարգ, նոր ուսումնական ծրագրեր, սովորողների ուսումնական արդյունքների գնահատման նոր համակարգ, հրատարակվեցին մի շարք ձեռնարկներ մանկավարժների համար և այլն:

Ընդունված որոշման համաձայն՝ երեխաները պիտի սովորեին միայն հայկական դպրոցներում, ուստի և կրճատվեց ռուսական դպրոցների թիվը: Հրատարակվեցին ուսումնական նոր ծրագրերով դասագրքեր, որոնցից, սակայն, ոչ բոլորն էին համապատասխանում հայ ազգային դպրոցի առջև դրված խնդիրներին: Անկախության առաջին տարիների ջեռուցման բացակայության պատճառով ուսումնական տարվա և դասաժամերի տևողության կրճատումը, լավագույն ուսուցիչների արտահոսքը, դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, զրեճական պիտույքների թանկությունը և այլ հանգամանքներ անհնար դարձրին ուսումնական պլանների կատարումը: Չնայած դպրոցների ջեռուցման գործում մի շարք արտասահմանյան կազմակերպությունների օգնությանը՝ պետությունն ի վիճակի չէր ապահովել բնականոն ուսումնական գործընթացը 3-4 ամսվա ընթացքում:

---

<sup>38</sup> Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2008-2015 թվականների պետական ծրագիր, էջ 16:

ՀՀ կրթական համակարգի տասնհինգամյա պատմությունը կարելի է բաժանել հետևյալ 2 հիմնական փուլերի՝ մինչև 1996 թ. և դրանից հետո, երբ ընդունվեց «Կրթության մասին» օրենքը: Հայաստանի Հանրապետությունում մինչև 1999 թվականը պետության դերը ժողովրդական կրթության գործում հստակեցված չէր: Բավական հաճախ փոփոխվող կառավարությունների ու նախարարների հետ մեկտեղ փոխարինվում էին նաև այդ ոլորտի նպատակներն ու ռազմավարությունը: Միայն «Կրթության մասին» օրենքի ընդունումից հետո կանոնակարգվեց համակարգի գործունեությունը: Վերջինիս հիմնադրույթների իրագործման նպատակով մշակվեց կրթության համակարգի պահպանման ու զարգացման համապարփակ ծրագիր, որում ձևավորված էին նախնադիրներն արդեն լուծման փուլում են: Միաժամանակ ՀՀ կառավարությունը հանրապետության Ազգային ժողովի հաստատմանը ներկայացրեց «Կրթության զարգացման պետական ծրագիրը», որը դարձավ կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը<sup>39</sup>:

1997 թվականին դասագրքերի ծրագիրը նախագծելիս դրվել էին հետևյալ նպատակներն ու խնդիրները՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր աշակերտի ապահովել հիմնական դասագրքերով, բարեփոխել և արդիականացնել հանրակրթության ուսումնական ծրագրերը:

Դպրոցական համակարգը իրավամբ համարվում է պետության հիմնասյուններից մեկը և վերափոխումների գործընթացը համաշխարհային կրթական զարգացումներից ետ չմնալու համար կարիք ունի անընդհատ վերանայման: Հատկապես, որ իրականացված վերափոխումները լիովին չեն արտացոլում ՀՀ դպրոցական համակարգի դեմ ծառայած իրական խնդիրները:

**ԵՐՐՈՐԴ ՂՆՈՒՆԸ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՒՆՆԵՐԻՆ (1991-2005 թթ.)»**, բաղկացած է երկու ենթագլխից.

**ՍՈՍԻԱԼ ԵՆԹԱԳՆՈՒՄ՝ «Նախնական և միջին մասնագիտական կրթության կազմակերպումը»:** Միջնակարգ մասնագիտական կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն էր, միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը:

Այն իրականացվում էր տեխնիկումների, ուսումնարանների և քոլեջների միջոցով (պետական և ոչ պետական):

1991 թվականին Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվեցին նոր տիպի ուսումնական հաստատություններ՝ քոլեջներ, որոնք սակայն պաշտոնապես համարվում էին միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ: Շրջանավարտներին շնորհվում էր կրտսեր ճարտարագետի կամ դրան համարժեք այլ որակավորում: Ընդունելությունը քոլեջներում կատարվում էր միայն միջնակարգ (լրիվ) ընդհանուր (10-ամյա) կրթության հիմքի վրա, իսկ ուսման տևողությունը 3 տարի էր:

Մասնագիտական կրթության հաջորդ աստիճանը Հայաստանի Հանրապետությունում միջին մասնագիտական կրթությունն է:

Միջին մասնագիտական կրթության նպատակը միջին մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն է, հիմնական ընդհանուր կամ միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա ընդհանուր և մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումը, մասնագիտական կարողությունների

<sup>39</sup> «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 3 (135), 31 հունվարի, 2001, էջ 45:

ձևավորումն ու ամրապնդումը: ԳՂ-ում ներկայումս միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում, ինչպես նաև առանձին բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ որպես միջին մասնագիտական կրթական ծրագիր:

1999 թվականից՝ ԳՂ կառավարության որոշման համաձայն, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելության արտոնությունից օգտվում են 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները, ծնողագուրկ երեխաները (մինչև 18 տարեկան), զոհված և 1-ին խմբի հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաներն ու ամուսինները, որոնք ընդունելության քն քննությունները հաջողությամբ հանձնելու դեպքում ընդունվում են մրցույթից դուրս՝ անվճար ուսուցման տեղերում (եթե այդպիսիք իրենց ընտրած մասնագիտության գծով նախատեսված են):

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտներին (ամփոփիչ ատեստավորում անցած անձանց) շնորհվում է տվյալ մասնագիտությանը համապատասխանող որակավորում, օրինակ՝ հաշվապահ, տեխնոլոգ, բուժքույր, տեխնիկ-շինարար, թարգմանիչ-գործավար, դասվար, ինչպես նաև նկարիչ-ձևավորող, երաժշտական համույթի կատարող, մարզիչ և այլն, որոնց հավաքական անվանումն է **կրտսեր մասնագետ**:

2004 թվականին նշակվել են «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ԳՂ օրենքի նախագիծը և «ԳՂ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որոնց հիմնական նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությունում նախնական և միջին մասնագիտական կրթության արդյունավետ համակարգի ստեղծման միջոցով ապահովել որակյալ մասնագետների պատրաստումը՝ տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

Չնայած կատարված վերափոխումներին՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ նախնական և միջին մասնագիտական կրթությունը, այնուամենայնիվ, նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, կորցնելով իր երբեմնի դերակատարումը կրթական համակարգում՝ չկարողացավ ամբողջությամբ արձագանքել նոր հասարակության պահանջները:

**ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԳԼՈՒՄ**՝ «Բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումը, զարգացման միտումները»: Եթե հանրակրթական ծրագրերը ուղղված են անհատի և քաղաքացու ձևավորմանը, դաստիարակմանը և զարգացման հիմքերի ստեղծմանը, ապա մասնագիտական ծրագրերը պետք է սոսկ ուղղված լինեն մասնագետի ձևավորմանը: Այսինքն՝ դա ենթադրում է համապատասխան որակավորման մասնագետների պատրաստում, կարողությունների և հմտությունների ձևավորում և զարգացում, գիտելիքների ընդլայնում, ինչպես նաև որակավորման բարձրացում: Մասնագիտական կրթությունը պետք է դիտել որպես անհատական զարգացման ներդրումային ծրագիր:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթությունն իրականացվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրի, մագիստրոսի և ասպիրանտի ծրագրերով՝ պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում, առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Զուգահեռաբար գործում է դիպլոմավորված մասնագետների պատրաստման համակարգը:

1991 թվականից անկախության ձեռք բերումից ի վեր, ԳՂ բուհական



համակարգը, ինչպես և ողջ հասարակությունը ենթարկվեց կառուցվածքային կտրուկ փոփոխությունների: 1995 թվականին իրար միացնելով գիտակրթական բնագավառի մախարարությունները՝ կազմակերպվեց ՀՀ կրթության և գիտության մախարարությունը:

Անկախացման ուղին բռնած ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը: Վճարովի ուսուցման ներդրումը հնարավորություն տվեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում հիմնականում պահպանել, ապա նաև ծավալային առումով զարգացնել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգը:

1999 թ. ապրիլի 14-ին ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Կրթության մասին ՀՀ օրենքը», որը հիմնված էր սահմանադրական սկզբունքների վրա: «Կրթության մասին օրենքը» հռչակում էր ինքնավարության ապահովումը, սակայն անփոփոխ էր թողնում կենտրոնացված վարչարարական մոտեցումը, այդպիսով սահմանափակելով բուհերի ակադեմիական ազատությունները: Պահպանվեցին համալսարանների ընդունելության քննությունների կենտրոնացված մրցութային կարգը, քննական առարկաների ցանկը և դրանց ներկայացվող պահանջները, կրթական միասնական պետական չափորոշիչները և ծրագրերը մնացին հիմնարար:

Ոչ պետական բուհերը չկարողանալով մրցել պետական բուհերի հետ, ստիպված ստեղծում են նոր շուկա՝ նվազեցնելով որակը և շեշտը դնելով քանակի վրա: Արդյունքում, սրանք փոխարինում են մախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտին: Մարդիկ մախնական կամ միջին մասնագիտական կրթությամբ՝ ստանում են բարձրագույն կրթության դիպլոմ՝ շատ հաճախ առանց գիտելիքների:

2003 թվականին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ բարձրագույն կրթության զարգացման ռազմավարությունը», որով մախատեսված են բարձրագույն կրթության վերափոխումների հետևյալ ուղղությունները՝ բարձրագույն կրթության համակարգի ներքին և արտաքին արդյունավետության աճի ապահովում, աշխատանքային շուկայի հետ կապերի ուժեղացում, բարձրագույն կրթության համակարգի մատչելիության ապահովում բնակչության բոլոր խավերի համար, բարձրագույն կրթության համակարգի կառավարման բարեփոխում, պետական ֆինանսավորման բարեփոխում, բարձրագույն կրթության համակարգի ինտեգրում Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (այսուհետ՝ ԵԲԿՏ) և ընդգրկում Բոլոնիայի գործընթացում:

ԵԲԿՏ գաղափարը սկիզբ է առել Սորբոնյան հռչակագրից, որը 1998 թվականի մայիսի 25-ին ստորագրել են Ֆրանսիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության մախարարները՝ Սորբոնի համալսարանի 800 -ամյակի առթիվ:

2005 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացավ Բոլոնյան գործընթացին, ինչը կապահովի Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության ինտեգրումը Եվրոպական միասնական կրթական համակարգին<sup>40</sup>:

Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովումը, պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստմանն աջակցելը. միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստելը: Խնդիրներից են նաև բարձրագույն և հետբուհական

<sup>40</sup> ՀՀ կառավարության 2005 թվականի գործունեության հաշվետվությունը, էջ 41:

մասնագիտական կրթության համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը միջազգային ասպարեզում, ինչպես նաև հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփանակության ձևերից:

Ամփոփելով նշենք, որ ՀՀ բուհական համակարգի առջև ծառայած խնդիրները չնայած իրականացրած ծրագրերին եվրոպական կրթական համակարգի մոդելին լիարժեք ինտեգրվելու համար դեռևս զգալի վերափոխումների կարիք ունեն:

**ԵԶՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ** բաժնում ի մի բերելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ հատկանշել ենք հետևյալ եզրահանգումները.

- Առանձին հիմնախնդիր էր գյուղական վայրերում նախադպրոցական հաստատությունների գործունեության կազմակերպումը, քանի որ շատ գյուղերում (հատկապես հեռավոր) սոցիալ-տնտեսական ծանր պայմանների պատճառով դրանք չէին գործում:

-Արմատական վերափոխումների կարիք ուներ նաև նախադպրոցական հաստատություններում աշխատող կադրերի պատրաստման և վերապատրաստման հարցը:

-ՀՀ ԿԳ նախարարության առաջնահերթ խնդիրներից էր նախադպրոցական երեխաների խնամքի, կրթության և զարգացման համալիր ծրագրի մշակումը և իրականացումը:

- Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ՀՀ-ում, ի տարբերություն զարգացած երկրների, ակնհայտ էր անջրպետը միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտում: Բնականաբար, այս երևույթն ուներ ինչպես տնտեսական և սոցիալական, այնպես էլ մշակութային հիմքեր:
- Դպրոցական համակարգը պետական համակարգի կարևորագույն օղակներից մեկն է. այն նաև համաշխարհային կրթական համակարգի մի մասն է, ուստի համաշխարհային կրթական զարգացումներից ետ չմնալու համար իրականացվող վերափոխումների գործընթացին զուգահեռ պետք է կատարվեր ամեն հնարավոր բան ազգային դպրոցի ձևավորման ու կայացման համար: Հատկապես, որ 1991-2005 թթ. իրականացված վերափոխումները լիովին չէին արտացոլում ՀՀ դպրոցական համակարգի դեմ ծառայած խնդիրները:
- Թեև նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում կատարվեցին մի շարք վերափոխումներ, այնուամենայնիվ, նախնական և միջին մասնագիտական կրթությունը նորանկախ Հայաստանի Հանրապետությունում, կորցնելով իր երբեմնի դերակատարումը կրթական համակարգում՝ չկարողացավ արձագանքել նոր հասարակության պահանջները:
- ՀՀ տնտեսական համակարգը դեռ պատրաստ չէ կլանելու շրջանավարտների մնան քանակությունը, անգամ եթե վերջինս որակապես բավարարի իր պահանջներին: Արդյունքում «գիտելիքի» ստացումը զնալով կորցնում է իր նշանակությունը՝ տեղը զիջելով դիպլոմի ձևական պահանջին: Որն էլ լուրջ վտանգ է ներկայացնում ոչ միայն ամբողջ բուհական համակարգի (հեղինակության, ֆինանսական կայունության) վրա, այլ նաև մարտահրավեր է տնտեսության հետագա զարգացմանը:
- ՀՀ անկախացման տարիներից ի վեր կրթական համակարգի

ապակենտրոնացման պետական քաղաքականությունը հանգեցրել է մաս որոշակի բացասական հետևանքների, մասնավորապես.

- նկատվել է ՀՀ կրթական համակարգի քանակական աճ, որը զուգորդվել է կրթության որակի անկմամբ, կրթական համակարգի ցածր արդյունավետությամբ,
- ՀՀ կրթական համակարգն ի զորու չէ ինքնաշխատ մեխանիզմների միջոցով արագ հարմարվել տնտեսության կառուցվածքային դինամիկ տեղաշարժերին. նկատվում է համակարգի ճկունության ցածր մակարդակ, որի արդյունքում աշխատաշուկայում գնալով սրվում է կրթական անհամապատասխանության խնդիրը,
- Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգը եթե ոչ ամբողջությամբ, ապա մեծամասամբ կորցրել է իր տնտեսական նշանակությունը, որը հարցականի տակ է դնում ՀՀ տնտեսության հատկապես գիտելիքահենք դառնալու հեռանկարները և առհասարակ միջազգային մրցունակությունը:
  - Կրթական համակարգի միջազգայնացման խնդրում Հայաստանի Հանրապետությունը դեռ բավականին անելիքներ ունի, քանի որ առհասարակ բացակայում են ուղղորտում կիրառվող պետական ռազմավարությունը, համակարգված մոտեցումներն ու քաղաքականությունը:
  - Հարատև կրթության որպես Բոլոնյան բաղադրիչի ՀՀ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ այդ հարցում չեն կիրառվում հնարավոր այն մեխանիզմները, որոնք թույլ կտան վերջինիս արագընթաց ներդրման իրականացմանը Հայաստանի Հանրապետությունում:
  - Ելնելով վերոնշյալ ռազմավարական առաջնահերթություններից՝ առաջարկվում է իրականացնել միջոցառումների համալիր ուղղված ՀՀ բուհական ծառայությունների արտահանման խթանմանը: Մասնավորապես՝ տեղեկատվական դաշտի թափանցիկության ապահովում, ուղղորտում խորհրդատվության համակարգի ներդրում, հայերենի և անգլերենի հատուկ դասընթացների մշակում օտարերկրացիների համար, ինչպես նաև անգլալեզու կրթական ծրագրերի մշակում, օվալացում և ինտերնետային համապատասխան կայքերում տեղադրում:
  - Հաշվի առնելով ECTS կրեդիտային համակարգին անցման և դրա հետ կապված կրթական ծրագրի մասնատման և զուգահեռաբար ուսանողի ընտրության ազատությամբ առաջացած վտանգը՝ կապված որակավորման համար պահանջվող ծրագրային կառուցվածքի խախտման հետ՝ առաջարկվում է որակավորման պահանջների սահմանմանը զուգահեռ նաև չսահմանափակել ուսանողների ընտրության հնարավորությունները (անհատական կրթական ծրագրերի կազմումը), փոխարենը՝ տարանջատելով *ավարտական հավաստագիր* և *դիպլոմ* հասկացությունները, վերջինս տալ միայն որակավորման պահանջներից ելնելով:
  - ԵԲԿՏ ինտեգրման, մասնավորապես հարատև կրթության ներդրման առումով անհրաժեշտ է խրախուսել տարբերակված (ըստ ուսանողների տարիքային և մտավոր առանձնահատկության) դասավանդման նոր մեթոդների ուսումնասիրությունը և կիրառումը, ինչպես նաև մասնավոր հատվածում հաջողություններ ունեցող շրջանավարտների միջով

կազմակերպել բաց դասեր:

**Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. ՀՀ կրթական համակարգի կերպափոխումը և ազգային ինքնության հիմնախնդիրը (ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման պայմաններում), Քաղաքագիտության հարցեր 2009. հասարակություն, պատմություն, քաղաքագիտություն (միջբուհական գիտաժողովի նյութեր), Երևան, «Մանկավարժ», 2010, էջ 142-148:
2. Հայաստանի Հանրապետության նախնական և միջին մասնագիտական կրթության հիմնախնդիրները 1991-2005 թթ., Միջազգային գիտաժողովի նյութեր, նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ 1, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2009, էջ 251-253:
3. Կրթության արդիականացումը (Նոր հարացույցներ ՀՀ կրթության համակարգում), Պատմության հարցեր, Տարեգիրք 1, խմբ. Ա. Ստեփանյան, Երևան, «Ձանգակ-97», 2009, էջ 232-237:
4. Կրթությունը Հայաստանում. անցումային շրջանի հիմնախնդիրները, Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, 3(36), «Ասողիկ» հրատ., Երևան, 2008, էջ 117-122:
5. Բուհական կրթության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներին, Երևան, Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Երևան, 2006, էջ 131-138:

**Мкртчян Лилит Сережаевна**

**Процесс реформирования сферы образования в Республике Армения  
в 1995-2005 гг.**

**Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук  
по специальности 07.00.01 “История Армении”.**

**Защита состоится 10 июля 2012 г. на заседании специализированного  
совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории  
Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна,  
24/4).**

### **Р Е З Ю М Е**

Диссертация состоит из вступительной части, трех глав и заключения. Также включает список использованных источников, литературы и приложение.

Во вступлении представлена источниковедческая база, история вопроса, рассмотрены стоящие перед настоящим исследованием задачи, также обосновываются важность и актуальность темы.

Первая глава диссертации - Кардинальные изменения в сфере образования в постсоветский период – посвящена опробации международного опыта в сфере образования Армении. Обоснована необходимость преобразований в этой области в настоящее время и всесторонне освещены ранее совершенные в этой сфере реформы.

Образование формирует личность человека, обеспечивая его развитие, обогащает знаниями, историческим опытом, открывает безграничные возможности человека.

Образовательная система каждого государства должна отображать культурные традиции его народа, но наряду с этим должна учитывать спрос и предложения рыночной экономики. Армянская образовательная система занимает свое место в мировой образовательной системе и естественно не может оставаться в стороне от векторов ее развития.

Основной задачей образования является интеграция демократических идей и сохранение национальной самобытности, способствование диалогу культур.

Во второй главе – Общеобразовательная система после установления независимости в республике (1992-2002 гг) - представлены преобразования в сфере дошкольного образования и реформы, введенные в систему среднего образования, также освещен ход реформ, и их результаты. Дошкольное образование - начальная составная часть общеобразовательной системы. Основными задачами здесь являются совершенствование руководства дошкольными учреждениями, обновление кадров, повышение профессиональной и специальной подготовленности персонала, оснащение материально-технической базой, учебно-методическими пособиями, расширение сети служб и услуг, а также ареала их доступности. Во исполнение этих задач был принят закон РА “О дошкольном образовании”, разработана стратегия преобразований детского и дошкольного образования и программа внедрения, которая позволит вовлечь большее число дошколят в образовательный процесс.

Первые годы независимости можно рассматривать как период становления системы путем сохранения рациональных основ образовательной системы советского периода.

1996-1997 гг. наряду с экономическим развитием в стране стали осуществлять преобразования в сфере среднего образования. Вплоть до 2003 года реформы в основном имели структуральный характер и призваны были решить финансовые и кадровые вопросы. Пятнадцатилетнюю историю новой образовательной системы РА можно подразделить на два основных этапа: до 1996 г. и после него, когда был принят закон “Об образовании”. До 1999 года роль государства в системе образования не была четко определена. Достаточно частая смена правительства и кабинета министров приводила к такой же частой смене тактики и стратегии в сфере образования. И только после принятия закона “Об образовании” упорядочилась и деятельность самой системы образования. Одновременно правительство РА представило на утверждение Национальному Собранию “Государственную программу развития образования”, которая стала основой политики государства в области образования.

Школьное образование по праву считается одним из основ, на которых держится государство, и для того чтобы поспеть за процессом реформ в мировой образовательной системе нужно постоянно держать его в сфере внимания. Тем более что уже осуществленные преобразования не смогли полностью решить проблем, реально стоящих перед общеобразовательной школой.

Третья глава озаглавлена “Специальное образование в годы независимости (1991-2005)”. Она посвящена проблемам организации предварительного и среднеспециального образования, а также касается преобразований в области высшего специального образования и развития этой сферы.

Задачей среднего образования является подготовка кадров для следующей ступени – среднеспециального образования. В 1991 году в Армении были основаны образовательные учреждения нового типа: колледжи – которые официально считались среднеспециальными учебными заведениями. Следующую ступень образования в РА обеспечивают среднеспециальные учебные заведения, которые на основе среднего образования углубляют и расширяют познания в соответствующей области, способствуют приобретению специальных знаний и навыков.

В 2004 г. правительством РА был представлен проект закона “О стратегии в области предварительного (ремесленного) и среднеспециального образования”, который призван был сформировать в Армении эффективную образовательную систему среднего звена, способную обеспечить развивающуюся экономику страны качественными специалистами в соответствии с рыночным спросом.

В результате настоящего исследования мы пришли к заключению, что, несмотря на осуществленные в этой сфере преобразования, среднеспециальные учебные заведения тем не менее не смогли полностью удовлетворить спрос на специалистов среднего звена.

Обобщая реформирование в области высшего образования, мы пришли к выводу, что модель европейской образовательной системы, внедряемая в вузовскую систему, далека от совершенства и по ходу развития также нуждается в существенных переменах.

В заключении обобщены основные результаты исследования, сделаны соответствующие выводы.

**MKRTCHYAN LILIT SERGEY**

**EDUCATIONAL REFORM IN RA DURING 1991-2005 PERIOD**

**Dissertation for the degree of the Doctor of History on the “Armenian History”  
07.00.05.**

**The Defense of the Dissertation will be held on the 10<sup>th</sup> of July, 2012, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).**

**S U M M A R Y**

The thesis consists of the introduction, three parts, the summary, the list of used sources and bibliography, and an appendix.

The importance and actuality of the subject, the sourcebase, issue history are presented in the introduction, as well as the main goals are defined.

The first part of the dissertation «Altering of Educational Content In Post-Soviet Period» examines the analysis of international reaserch in educational field, necessity of reforms in the educational field of RA, as well as gives a comprehensive study of the preceding improvements.

Education is a process of personal formation and development, obtaining the skills of cognitive activities, presentation of knowledge.

A new educational system for any country must reflect its cultural traditions, as well as take into account the economic needs.

Armenian educational system has its unique place in the universal educational system, and naturally it must be a part in educational developments.

The main goal of education is to support comprehensive manifestation of national values and democratic discussions and to develop approaches to multicultural identity dialoges.

In the second part- «Education in The Years of Independency (1991-2002) »- reforms of elementary education are examined, as well as reforms and results of secondary education are highlighted.

Elementary education is the starting step of long-term educational system. Its main streams were the development of legislative sphere and governing system, professional training of human resources, development of database.

The first years of independency may be defined as surviving and maintaining period of soviet educational achievements. In 1996-1997, along with economic development of the country, educational reforms were launched. Till 2003 reforms were mostly structural and were directed to solve funding and governing problems.

15 years of RA educational system may be divided into two main parts- before 1996 and after that when «The Law of Education» was passed. Till 1999 the role of the state in educational system was not clarified. Together with often-changing governments and ministers priorities and goals of the area were changing too. And only after «The Law of Education» the activity of system was set. This resulted into «Educational development state

program» which launched state policy in the educational system.

Educational system is undoubtedly one of the fundamentals of the state and the reforms of the system must be permanently reviewed and updated to universal educational developments. Especially, when fulfilled reforms do not completely reflect the main problems of RA educational system.

The third part- « Secondary Professional Education in the Years of RA Independency (1991-2005)», examines the organizational issues of elementary and secondary education, as well as tendencies and evaluation of higher education.

Secondary education used to train human resources on the basis of common education. In 1991, colleges -new types of educational institutions- were organized which officially were admitted institutions of secondary professional education.

In 2004 new laws were launched supporting this field but despite the made reforms, we come to conclusion that elementary and secondary professional education, however, couldn't thoroughly reflect the needs of newly independent society and lost its former role in educational system.

To summarize, it must be mentioned that RA higher education system does still need profound reforms to be integrated into European educational system model. In the summary of the dissertation all the conclusions and reasonings are given.